Գեղեցիկ Մարօն հեռոից նայում էր հօր գգոանքին, կարծես, նա էլ ուզում էր մօտենալ ինձ, կարծես նրա փակոած շրթունքի մէջ պահոած էին ինձ համար մի քանի քաղցրիկ խօսքեր — «ես էլ ուրախ եմ, Ֆարհատ, շա՛տ ուրախ, քեզ տեսնելու համար»...: Բայց ոչ, հայ աղջկայ ամօթխածութիւնը երկաթի փականք էր դրել նրա լեզուին, ես այս խօսքերը կարդում էի նրա ուրախութիւնից պայծառացած երեսի վրայ:

Որսորդը սկսեց այնուհետեւ հարցնել մօրս մասին, քոյրերիս մասին, թէ որպէս ապրում են նրանք, ինչ վիճակի մէջ են գտնւում, ով է հոգ տանում նրանց անբախտութեանը: Քաջալերեց ինձ, թէ ես կարող էի օգնել նրանց, մխիթարել մօրս եւ մտածել քոյրերիս բախտաւորութեան մասին: Նա աւելացրեց, թէ շատ ուրախ է, տեսնելով, որ ես ընկել եմ Կարօյի հասարակութեան մէջ եւ թէ այդ ընկերութիւնը կարող էր օգտաւէտ վախճանի հասցնել ինձ: Յետոյ նա դարձաւ դէպի Մարօն.

— Դու ինչո՞ւ մօտ չես գալիս, չես հարցնում Մարիամի, Մագթաղի մասին: Չէ՞ որ նրանք քո հին քոյրիկներն էին. ամէն օր մէկմէկու ծամեր էիք փետտում, մէկ-մէկու երես էիք ծվատում էլի բարիշում էիք: Այդպէս չէ՞, իմ կատոիկ, մոռացե՞լ ես, հա՛:

Ես յիշեցի այն գիշերը, այն ձմեռային սարսափելի գիշերը, երբ մրրիկը դրսում կատաղաբար մռնչում էր եւ ձիւնը առատօրէն մաղւում էր երկնքից: Մենք նստած էինք գերեզմանի պէս ցուրտ խրճիթի մէջ: Մայրս կարում էր, ես վառարանի մօտ քրքրում էր յանգած կրակը: Մարիամը եւ Մագթաղը քնած էին: Աշտանակի վրայ իւղը սպառոած ճրագը պլպլում էր, որպէս մի շնչաւոր, որ հոգեվարքի մէջ է գտնւում: Յանկարծ դեւի նման ներս վազեց Մարօն, ճարպիկ, աշխուժով լի մի երեխայ, որի անմեղ չարութիւններն անգամ սիրելի էին մեզ: Ես յիշեցի, թէ որպէս քարշ ընկած մօրս պարանոցին, յիմարյիմար շատախօսում էր նա եւ տաք-տաք համբուրում էր մօրս երեսը: Նա ուրախանում էր, որ ձիւն է գալիս, եւ մի առանձին երեխայական ոգեւորութեամբ ասում էր, վաղ առաւօտեան կվազվզէ նրա մէջ: Ես յիշեցի, թէ որպէս նա յարձակոեցաւ քնած Մարիամի վրայ, իր փոքրիկ ճանկերով բռնեց նրա կոկորդից, եւ կրկին կայծակի արագութեամբ դուրս փախաւ մեր խրճիթից:

Կրկին տեսնում էի այն կեանքով լի, վայրենի երեխային, այժմ հասուն, վայելչուչ կազմոածքով, կանգնած էր իմ առջեւ որպէս մի լեռնային հրեշտակ: Նոյն հրեղէն աչքերը եւ այժմ վառւում էին լի գեղեցիկ վրդովմունքով, նոյն սեւուկ երեսը իր դիւական ժպիտով եւ այժմ կախարդիչ էր:

Չնայելով հօր խօսքերին, Մարօն չմօտեցաւ ինձ. միայն ծիծաղեց եւ սենեակից դուրս գնաց, հիւրերի համար մի նոր բան բերելու: Ամօթխածու-